ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Հավելված N 1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի
նախագահի 2020 թվականի
մայիսի 27-ի N 477-Ն հրամանի

Օրինակելի ձև

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Գործադիր մարմնի կողմից
30.05.2024 թ.

ՀԱՇԵՏՎՈՒԹՅՈՒՆ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ»
հասարակական կազմակերպության 2023 թ. գործունեության մասին

1. Հասարակական կազմակերպության՝		
1.1 Լրիվ անվանումը		«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ»
1.2 ՀՎՀՀ-ն		02566915
1.3 Գտնվելու վայրը		ԵՐԵՎԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԿԵՆՏՐՈՆ ԹԱՂԱՄԱՍ ԽԱՆՋՅԱՆ Փ. 27
1.4 Պետական գրանցման համարը		211.171.1039517
1.5 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը		2003-02-20
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)		+(374)10305050
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը		www.ffa.am
1.8 Էլեկտրոնային փոստը		finance@ffa.am
2 Գործադիր մարմնի ղեկավարի՝		
Անունը	Ազգանունը	Պաշտոնը
ԱՐՄԵՆ	ՄԵԼԻՔԲԵԿՅԱՆ	Նախագահ
3 Կանոնադրությամբ սահմանված գործունեության առարկան և նպատակը		
ա)շարունակաբար զարգացնել ֆուտբոլ խաղը, խթանել, կանոնակարգել և վերահսկել այն ՀՖՖ-ի իրավասության ներքո գտնվող ողջ տարածքում՝ արդար խաղի և դրա միավորող, կրթական, մշակութային և մարդասիրական արժեքների լույսի ներքո՝ դա իրականացնելով մասնավորապես երիտասարդական, մանկապատանեկան և զարգացման ծրագրերի միջոցով		
բ)կազմակերպել ֆուտբոլի, ֆուտզալի և լողափնյա ֆուտբոլի ազգային առաջնություններ՝ հստակ սահմանելով տարբեր Լիգաներին (եթե այդպիսիք կան) տրված իրավասությունների շրջանակը		
գ)կազմել կանոնակարգեր և կանոններ և ապահովել դրանց կիրառումը		
դ)պաշտպանել իր Անդամների շահերը		
ե) հարգել ՖԻՖԱ-ի, ՈՒԵՖԱ-ի և ՀՖՖ-ի կանոնադրությունները, կանոնակարգերը, կարգադրությունները և որոշումները և կանխել դրանց, ինչպես նաև Խաղի կանոնների որևէ խախտում և ապահովել Անդամների կողմից այդ կանոնների պահպանումը		
զ) խթանել բարեվարքությունը, էթիկան և արդար խաղի կանոնները՝ նպատակ հետապնդելով կանխարգելելու խախտումների բոլոր մեթոդներն ու գործողությունները, ինչպիսիք են կոռուպցիան, դոպինգի օգտագործումը կամ պայմանավորված խաղերը, ինչը կարող է վտանգել խաղերի, առաջնությունների, Խաղացողների, Պաշտոնատար անձանց և Անդամների բարեվարքությունը կամ հանգեցնել Ասոցիացիոն ֆուտբոլի, ֆուտզալի կամ լողափնյա ֆուտբոլի ոլորտում չարաշահումների		
է) խթանել կանանց ֆուտբոլի զարգացումը և ֆուտբոլի ղեկավարման բոլոր մակարդակներում կանանց լիարժեք մասնակցությունը.		
ը) վերահսկել և ղեկավարել Հայաստանի տարածքում անցկացվող բոլոր տեսակի ֆուտբոլային ընկերական խաղերը.		
թ) ազգային մակարդակում վերահսկել և ղեկավարել Ասոցիացիոն ֆուտբոլի, ֆուտզալի կամ լողափնյա ֆուտբոլի խաղերը և վերահսկել և ղեկավարել Հայաստանի տարածքում անցկացվող բոլոր տեսակի միջազգային ֆուտբոլային խաղերը՝ համաձայն ՖԻՖԱ-ի և Կոնֆեդերացիաների համապատասխան կանոնադրությունների (ՖԻՖԱ-ի կանոնադրության 11-րդ կետի 1-ին ենթակետ) և կանոնակարգերի		
ժ) ապահովել միջազգային մարզական հարաբերությունները Ասոցիացիոն ֆուտբոլի, ֆուտզալի կամ լողափնյա ֆուտբոլի ոլորտներում		
ժա) հյուրընկալել և անցկացնել միջազգային և ազգային առաջնություններ.		
ժբ) ապահովել ՀՖՖ-ի գործունեության և ֆինանսական տարեկան հաշվետվությունների թափանցիկությունը և հրապարակայնությունը.		
ժգ) իրականացնել իր կանոնադրական նպատակներին համապատասխան և օրենքով չարգելված այլ գործունեություն։		
4 Հասարակական կազմակերպության՝		
4.1 Անդամների թիվը		32
4.2 Կամավորների թիվը		
5 Հաշվետու տարվա ընթացքում գումարված ժողովների քանակը		1
6. Իրականացված ծրագրեր՝		

Հ/Հ	6.1 Ծրագրի անվանումը	6.2 Վայրը	6.3 Նպատակը	6.4 Կարգավիճակը
1	Ազգային հավաքականների խաղերի կազմակերպում	ՀՀ, ք Երևան	Կազմակերպել և անցկացնել ազգային հավաքականների խաղերը	Ընթացքի մեջ
2	Մասսայական ֆուտբոլի զարգացում	ՀՀ տարածք	Խթանել մասսայական ֆուտբոլի զարգացումը ՀՀ-ում	Ընթացքի մեջ
3	Մանկապատանեկան ֆուտբոլի զարգացում	ՀՀ տարածք	Խթանել մանկապատանեկան ֆուտբոլի զարգացումը ՀՀ-ում	Ընթացքի մեջ
4	Ազգային հավաքականների զարգացման ծրագիր	ՀՀ տարածք	Իրագործել ազգային հավաքականների զարգացման նախատեսված ծրագրերը	Ընթացքի մեջ

7. Հանրային միջոցներով իրականացված ծրագրեր՝

Հ/Հ	7.1 Ծրագրի անվանումը	7.2 Վայրը	7.3 Կարգավիճակը	7.4 Նպատակը	7.5 Հիմնական արդյունքները
1	Խորվաթիայի և Հայաստանի Ազգային հավաքականների հանդիպման կազմակերպում	Խորվաթիայի հանրապետություն	Ավարտված	ԵՎՐՈ 2024 ընտրական փուլին մասնակցություն	
2	Մասսայական ֆուտբոլի ենթակառուցվածքների զարգացում	ՀՀ տարածք	Ընթացքի մեջ	Համայնքներում արհեստական խոտածածկով խաղադաշտերի կառուցում	Մասսայական և մանկապատանեկան ֆուտբոլի խթանում ՀՀ համայնքներում

8. Տարեկան մուտքեր՝

8.1 Դրամական միջոցները	10,176,011,166
8.2 Գույքը	201,541,643
Ընդամենը	10,377,552,809

9. Հանրային միջոցներ և ստացման աղբյուրներ

Հ/Հ	9.1 Դրամական միջոցները	9.3 Ստացման աղբյուրները
1	993,814,800	ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
2	14,789,600	Երևանի քաղաքապետարան
3	12,800,000	Արթիկի համայնք
4	8,873,726	Արմավիր համայնք
5	6,400,000	Նոյեմբերյանի համայնք
6	6,400,000	Դիլիջանի համայնք
7	6,294,850	Գավառի քաղաքապետարան
8	3,495,600	Վարդենիս համայնք
9	3,277,250	Արարատ համայնք
10	3,227,250	Մարտունու քաղաքապետարան
11	3,200,000	Սպիտակի համայնք
12	3,200,000	Իջևանի համայնք
13	3,200,000	Արտաշատի Շ Ազնավուրի անվ մշ տուն
14	3,200,000	Աշոցքի համայնք
15	2,957,909	Սևանի համայնք
16	2,957,909	Ծաղկաձոր համայնք
17	2,957,909	Էջմիածնի համայնք
18	2,957,909	Գեղակերտի համայնք
19	2,957,909	Բյուրեղավանի քաղաքապետարան
20	1,600,000	Բերդի համայնք
21	1,227,250	Ճամբարակի համայնք
22	3,457,909	Նաիրիի համայնքապետարան
23	500,000	ՀՊՏՀ ՊՈԱԿ
24	3,207,909	Նոր-Հաճնի համայնքապետարան
25	200,000	Թալինի Համայնք
26	90,810	Լ. Միրիջանյան թիվ 155 դպ. ՊՈԱԿ
27	3,200,000	Տաշիրի մարզադպրոց
28	2,957,909	Ակունքի համայնք
29	2,957,909	Գայի համայնք
30	2,957,909	Գառնիի համայնք
31	5,915,818	Հրազդանի համայնք

32	5,915,818	Մեծամորի համայնք
33	2,957,909	Փարաքարի համայնք
Հ/Հ	9.2 Գույքը	
1	75,510,600	Արտաշատի համայնքապետարան
Ընդամենը	1,199,620,371	
10. Օգտագործված դրամական միջոցները և/կամ շարժական/անշարժ գույքը՝		
10.1 Դրամական միջոցները		9,096,603,011
10.2 Գույքը		
Հ/Հ	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
1	Գույք	58,554,563
Ընդամենը		9,155,157,574
11. Հանրային դրամական միջոցների և/կամ տրամադրված գույքի օգտագործումը, ծախսերը՝		
11.1 Դրամական միջոցները		109,133,013
11.2 Գույքը		
Հ/Հ	11.2.1 Տեսակը	11.2.2 Արժեքը
1		
Ընդամենը		109,133,013

12. Ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու՝

Հ/Հ	12.1 Տեսակը	12.2 Ստացված շահույթը	12.3 Շահույթի օգտագործումը
1	Ապրանքների մանրածախ վաճառք	160,989,645	Օգտագործվել է միջազգային մրցաշարերի անցկացման շրջանակներում
2	Գործառնական վարձակալություն	15,205,646	Օգտագործվել է ֆուտբոլի զարգացման նպատակով իրականացվող ծրագրերի շրջանակներում
3	Մարզադաշտում խաղի անցկացման թույտվություն	50,500,000	Օգտագործվել է ֆուտբոլի զարգացման նպատակով իրականացվող ծրագրերի շրջանակներում
4	Գովազդային ծառայություններ	474,972,225	Օգտագործվել է ֆուտբոլ խաղի զարգացման նպատակով իրականացվող ծրագրերի շրջանակներում
5	Այլ ծառայությունների մատուցում	3,628,685	Օգտագործվել է ֆուտբոլ խաղի զարգացման նպատակով իրականացվող ծրագրերի շրջանակներում
Ընդամենը		705,296,201	
Նշումներ			

Կից ներկայացվում է՝

Աուդիտորի եզրակացություն՝ _____8_____ էջից

Էջերի քանակը

Գործադիր մարմնի ղեկավար _____

ստորագրություն, անունը, ազգանուն

Գլխավոր հաշվապահ _____

ստորագրություն, անունը, ազգանուն

2023թ. գործունեության մասին հաշվետվություն,

որպես հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվություն և

Անկախ աուդիտորական եզրակացություն

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԿ

Բովանդակություն

	Էջ
Անկախ աուդիտորական եզրակացություն	2
2023թ. ՀԿ գործունեության վերաբերյալ հաշվետվություն	5
Հաշվետվությանը կից ծանոթագրություններ	
1. Կազմակերպության նկարագիրը և գործունեությունը	8
2. Կառուցվածք	9
3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի վերաբերյալ համառոտագիր	9
4. Ֆինանսական հաշվետվությունների վավերացումը	10

«ԳԼՈԲ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ
ք. Երևան 0070
Երվանդ Քոչարի փող. 19/8
e-mail: auditglobaudit@mail.ru
www.globaudit.am

Անկախ աուդիտորական եզրակացություն

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» հասարակական կազմակերպության ղեկավարությանը

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ նաև Կազմակերպություն) 2023թ. գործունեության մասին հաշվետվությունը՝ որպես հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվություն, ինչպես նաև հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի վերաբերյալ համառոտագիրը և այլ բացատրական ծանոթագրությունները (այսուհետ միասին՝ Ֆինանսական հաշվետվություններ):

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Կազմակերպության ղեկավարության կողմից՝ կիրառելով հաշվապահական հաշվառման դրամարկղային հիմունքը (բացառությամբ 12-րդ կետում նշված տեղեկատվության), որը նկարագրված է ծանոթագրություն 3-ում:

Մեր կարծիքով, Ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» հասարակական կազմակերպության 2023թ. դրամական միջոցների ստացումները և վճարումները՝ համաձայն Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2020թ. մայիսի 27-ի N 477-Ն հրամանի:

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն իրականացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Կազմակերպությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից

հրապարակած Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀՄԷՍԽ կանոնների: Համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Ֆինանսական հաշվետվությունների համար ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը:

Կազմակերպության ղեկավարությունը պատասխանատու է հաշվապահական հաշվառման դրամարկղային հիմունքի համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվություններն, ամբողջությամբ վերցրած, զերծ են խարդախության կամ սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրումներից և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում.

- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Կազմակերպության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար.
- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը.
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք, արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Կազմակերպության անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Կազմակերպությանը դադարեցնել անընդհատության սկզբունքի կիրառումը:
- գնահատում ենք ընդհանուր առմամբ ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, և արդյոք ֆինանսական հաշվետվությունները ներկայացնում են դրանց հիմքում ընկած գործարքներն ու իրադարձություններն այն ձևով, որն ապահովում է ճշմարիտ ներկայացումը:

Ի թիվս այլ հարցերի, մենք տեղեկացնում ենք կառավարման օղակներում ներգրավված անձանց առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

15 հուլիսի 2024թ.
«ԳԼՈԲ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ

Տնօրեն Դ. Հարությունյան

Աուդիտոր Կ. Շահինյան

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» հասարակական կազմակերպության գործունեության մասին հաշվետվության՝ որպես հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվության, կից ծանոթագրություններ

1. Կազմակերպության նկարագիրը և գործունեությունը

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ ՀՖՖ) հիմնադրվել է 2018թ.-ին (պետական գրանցման համարը՝ 211.171.1039517):

ՀՖՖ-ն ինքնաֆինանսավորվող, ինքնակառավարվող, շահույթ ստանալու նպատակ չհետապնդող (ոչ առևտրային) կազմակերպություն է:

ՀՖՖ-ն ստեղծվել է օրենքի պահանջին համապատասխան «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության վերակազմավորման ձևով վերակազմակերպման արդյունքում և հանդիսանում է վերջինիս գույքի, իրավունքների և պարտավորությունների իրավահաջորդը փոխանցման ակտին համաձայն՝ «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության գործունեության դադարման և ՀՖՖ-ի պետական գրանցման պահից:

ՀՖՖ-ն ունի 2 (երկու) դուստր կազմակերպություններ՝

- «ՀՖՖ-ի Տեխնիկական Կենտրոն-Ակադեմիա» ՓԲԸ (սեփականության բաժնեմասեր՝ 100%),
- «ՀՖՖ-ի Վազգեն Սարգսյանի անվան մարզադաշտ» ՓԲԸ (սեփականության բաժնեմասեր՝ 100%):

ՀՖՖ-ն կազմավորվել է անսահմանափակ ժամանակով:
ՀՖՖ-ն ստեղծված է հասարակական կազմակերպության կարգավիճակ ունեցող ֆուտբոլային ակումբների և ֆուտբոլ խաղի զարգացմանը նպաստող ցանկացած այլ ոչ առևտրային կազմակերպությունների կամավոր միավորումից՝ իր անդամ կազմակերպությունների գործունեությունը համակարգելու, ինչպես նաև իրենց ընդհանուր շահերը ներկայացնելու և պաշտպանելու նպատակով:
ՀՖՖ–ն ֆուտբոլի միջազգային ֆեդերացիայի և ֆուտբոլի եվրոպական ֆեդերացիայի լիիրավ անդամ է, ունի այդ կազմակերպություններում Հայաստանի ֆուտբոլային ակումբների և հավաքականների շահերը պաշտպանելու բացառիկ իրավունքներ:
ՀՖՖ-ի մարմինները և պաշտոնատար անձինք իրենց գործունեության ընթացքում պարտավոր են առաջնորդվել ՖԻՖԱ-ի, ՈՒԵՖԱ-ի և ՀՖՖ-ի կանոնադրություններով, կանոնակարգերով, շրջաբերականներով և որոշումներով, ինչպես նաև ՖԻՖԱ-ի Վարքագծի կանոններով:
ՀՖՖ-ն չեզոք է քաղաքական և կրոնական հարցերում:
ՀՖՖ-ն գործում է Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում, ինչպես նաև օտարերկրյա պետություններում:
ՀՖՖ-ի առաքելությունն է.
• ՀՀ-ում քարոզել և զարգացնել ֆուտբոլը, բարձրացնել նրա դերն անձի բազմակողմանի և ներդաշնակ զարգացմանը նպաստելու համար, հայկական ֆուտբոլի մակարդակը հավասարեցնել միջազգային չափանիշներին, հնարավոր բոլոր միջոցներով ամրապնդել միջազգային մարզական հարաբերությունները ֆուտբոլի ասպարեզում:
• Ընդունելի բոլոր միջոցներով զարգացնել, աջակցել, վերահսկել և կարգավորել ֆուտբոլ մարզաձևը ՀՀ ողջ տարածքում՝ ղեկավարվելով ազնիվ խաղի սկզբունքներով:

• Պաշտպանել իր անդամների իրավունքները և շահերը:

ՀՖՖ-ի Գլխավոր գրասենյակը (գտնվելու վայրը) գտնվում է Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Խանջյան փողոց 27 հասցեում և կարող է տեղափոխվել այլ վայր միայն Ժողովի համապատասխան որոշմամբ:

2. Կառուցվածք

ՀՖՖ-մարմիններն են՝

- Ժողով. ՀՖՖ-ի բարձրագույն և իրավաստեղծ մարմինն է,
- Նախագահ. ՀՖՖ-ի Գործադիր կոմիտեի ղեկավարն է և իրավասու է ներկայացնել ՀՖՖ-ն առանց լիազորագրի,
- Գործադիր կոմիտե. ՀՖՖ-ի գործադիր մարմինն է,
- Գլխավոր քարտուղարություն (Գլխավոր քարտուղար). ՀՖՖ-ի գործառնական և վարչական մարմինն է:

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի վերաբերյալ համառոտագիր

3.1 Ֆինանսական հաշվետվությունները ներառում են ՀՖՖ-ի 2023թ. գործունեության վերաբերյալ հաշվետվությունը՝ որպես հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվություն, ինչպես նաև հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի վերաբերյալ համառոտագիրը և այլ բացատրական ծանոթագրությունները:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի համաձայն:

3.2 Ֆինանսական հաշվետվությունները եկամուտների (մուտքերի) և ծախսերի (ելքերի) վերաբերյալ հատուկ նպատակի հիմունքի համաձայն պատրաստված հաշվետվություններ են:

ՀՖՖ-ն ֆինանսական հաշվետվությունները պատրաստել է՝ կիրառելով հաշվապահական հաշվառման դրամարկղային հիմունքը (բացառությամբ 12-րդ կետում նշված տեղեկատվության): Դրամարկղային հիմունքը հաշվապահական հաշվառման այլ համապարփակ հիմունք է, որը նախատեսված չէ Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտներին համապատասխանության համար: Այս հիմունքի համաձայն եկամուտները և ծախսերը ճանաչվում են, երբ դրամական միջոցները ստացվում են կամ կատարվում են վճարումներ:

3.3 Հայաստանի Հանրապետության արժույթը ՀՀ դրամն է, որը ՀՖՖ-ի ֆունկցիոնալ և ներկայացման արժույթն է: Ֆինանսական տեղեկատվությունը ցույց է տրվում ՀՀ դրամներով:

3.4 Արտարժույթով գործառնությունը սկզբնապես ճանաչման պահին հաշվառվում է ֆունկցիոնալ արժույթով՝ արտարժույթի գումարի նկատմամբ կիրառելով ֆունկցիոնալ արժույթի և արտարժույթի միջև գործառնության ամսաթվի դրությամբ սփոթ փոխանակման փոխարժեքը:

Որպես սփոթ փոխանակման փոխարժեք ընդունվում է արժութային շուկայում ձևավորված արտարժույթների միջին փոխարժեքը:

4. Ֆինանսական հաշվետվությունների վավերացումը

Ֆինանսական հաշվետվությունները ստորագրվել են հրապարակման համար 2024թ. մայիսի 30-ին՝ նախագահ Արմեն Մելիքբեկյանի կողմից:

Նախագահ _____ **Արմեն Մելիքբեկյան**

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 15.07.2024 18:29